ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը.

Հարություն Վանյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

Կորեայի Հանրապետություն (Բուսան), հուլիսի 18-30, 2026 թ.

Հրավիրող կողմը.

ՅՈՒՆԵՍԿՕ, Համաշխարհային ժառանգության կենտրոն

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր որպես կոնվենցիայի՝ Հայաստանի կողմից համակարգող և ազգային փորձագետ մասնակցել նիստին: Հայաստանը

Scanned with CamScanner

առաջին անգամ մասնակցում էր որպես նորընտիր Կոմիտեի անդամ: Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Արամ Հակոբյանը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ազգային 5 փորձագետները: Աշխատանքներին 3 օրով մասնակցեց նաև Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչը:

Քննարկված թեմաները.

Թեմաները քննարկվեցին ըստ օրակարգային հաջորդականության՝ սկսած Համաշխարհային ժառանգության կենտրոնի՝ վերջին տարում իրականացված աշխատանքների հաշվետվությունից, մինչև ֆինանսական հաշվետվություններ, Աֆրիկայում և Փոքր կղզիներում իրականացված ծրագրեր, վերապատրաստման դասընթացներ, Խորհրդատվական և Ռեակտիվ մոնիթորինգի այցերի հաշվետվություն: Քննարկվեցին նաև ներկայացված 134 Պահպանության վիճակի մասին հաշվետվությունները (State of Conservation Reports): Դրանցից մոտ 15-ի վերաբերյալ բացվեցին մանրամասն քննարկումներ, կոմիտեի անդամ երկրները հեղինակեցին և համահեղինակեցին փոփոխություններ (այդ թվում՝ Հայաստանը): Քննարկվեցին նաև ներկայացված 33 գրանցման նոր օբյեկտները, որոնցից գրանցում ստացան միայն 25-ը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հուլիսի 19-ին անցկացվեց Բյուրոյի նիստը, որի ընթացքում քննարկվեց նոր ստացված բարեփոխումների (amendments) ձևաչափը, ժամկետները, կոմիտեի անդամ պետությունների ծանուցման ընթացակարգը: Երեկոյան մասնակցեցինք

Scanned with CamScanner

նստաշրջանի պաշտոնական բացման արարողությանը, որին ներկա էր նաև Կորեայի Հանրապետության նախագահը: Հուլիսի 20-ից մեկնարկեցին կոմիտեի հիմնական աշխատանքները:

Քննարկվեց Կոնվենցիայի 5A հաշվետվությունը՝ 2025 թ. օգոստոսից 2026 թ. մայիս ընկած ժամանակահատվածի կոմիտեի գործունեության և որոշումների կատարման վերաբերյալ: Ելույթ ունեցան կոմիտեի գրեթե բոլոր անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանը: Հիմնական դիրքորոշումը Կոմիտեի կառուցվածքային բարեփոխումների գործընթացի աջակցություն հայտնելն էր: Փաստաթուղթն ընդունվեց համընդհանուր համաձայնությամբ՝ Սենեգալի, Քենիայի, Տանզանիայի և Տոգոյի կողմից առաջարկված որոշակի փոփոխությունների ներառմամբ: Քննարկվեցին նաև 5B (ICCROM, ICOMOS և IUCN խորհրդատվական մարմինների տարեկան զեկույցները), 5C (Աֆրիկյան երկրների զեկույց), 5D (նոր գրանցումներ և նախնական ցանկեր) և 6A–6C (կարողությունների զարգացման ռազմավարություն, Աֆրիկայում Համաշխարհային ժառանգության ռազմավարության իրականացում) փաստաթղթերը, որոնց շուրջ Հայաստանը հանդես եկավ աջակցող դիրքորոշումներով:

Ժառանգության օբյեկտների պահպանության վիճակի մասին հաշվետվությունների (State of Conservation Reports) քննարկումներ

Նստաշրջանի զգալի մասը հատկացվեց հայտերի պահպանության վիճակի մասին հաշվետվությունների (State of Conservation) քննարկմանը: Ուկրաինայի Chersonese հուշարձանի հարցում, հաշվի առնելով ռուսական հարձակման հետևանքով հասցված վնասները, կոմիտեն միաձայն որոշում ընդունեց հուշարձանն ընդգրկել վտանգված ժառանգության ցանկում: Երկարատև քննարկումների առարկա էին նաև՝ Ավստրիայի Վիեննայի պատմական կենտրոնի հայտը, Ռուսաստանի Բայկալ լճի հայտը (հետաձգվեց մինչև 49-րդ նստաշրջանը), Լիբանանի Տյուրոսի հայտը (ընդգրկվեց վտանգված ցանկում), Հնդկաստանի Համփիի հուշարձանների խումբը և

Scanned with CamScanner

Բանգլադեշի Սանդարբանսը: Հայաստանը մասնակցեց այս բոլոր քննարկումներին և հանդես եկավ հուշարձանների պահպանությանն ուղղված դիրքորոշումներով, մասնավորապես աջակցելով Լիբանանին և Հնդկաստանին:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նոր հայտերի գրանցում

Նստաշրջանի ընթացքում ներկայացված 33 հայտերից մանրամասն քննարկվեցին հետևյալ հայտերը՝ Ամել սարի ամրոցները, Պաղեստինի Սեբաստիան (գրանցվեց արտակարգ/արագացված ընթացակարգով), Կոմորոսի պատմական սուլթանությունները, Ղազախստանի ժայռափոր մզկիթները, Մոնղոլիայի ազնվականության դամբարանային համալիրները, Հնդկաստանի Վարանասին, Ուզբեկստանի Տաշքենդի մոդեռնիստական ճարտարապետությունը, Հունաստանի Օլիմպոս լեռը, Լեհաստանի Գդինիան և Բրազիլիայի Ամազոնիայի թատրոնները: Հայաստանի պատվիրակությունը մի շարք հայտերի (Ղազախստանի ժայռափոր դամբարանները, Օլիմպոս լեռը, Ուզբեկստանի հայտը, Գդինիան, Ամազոնիայի թատրոնները) որոշման նախագծերի համահեղինակ և աջակից էր: Առանձնահատուկ ուշադրության արժանացավ Իսպանիայի «Ribeira Sacra Waterscape» հայտի քննարկումը, որտեղ երկարատև բանավեճից հետո Հայաստանը հանդես եկավ հայտի հետաձգման օգտին՝ գնահատելով դրա արժեքը, սակայն նշելով OUV-ի (Համընդգրկուն բացառիկ արժեքի) լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտությունը: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական հայտարարության, Բուսանում կայացած Համաշխարհային ժառանգության կոմիտեի 48-րդ նստաշրջանն ավարտվեց՝

Scanned with CamScanner

վերահաստատելով միջազգային հանրության հանձնառությունը ժառանգության պահպանության հանդեպ. Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցվեց 25 նոր օբյեկտ:

Նստաշրջանի ողջ ընթացքում Հայաստանի պատվիրակությունը ակտիվորեն մասնակցել է քննարկումներին և ունեցել ելույթներ՝ ինչպես ընթացակարգային և ինստիտուցիոնալ հարցերի (կոմիտեի աշխատանքի բարեփոխումներ, կարողությունների զարգացում, Աֆրիկայի ռազմավարություն), այնպես էլ կոնկրետ հայտերի ու պահպանության վիճակի մասին հաշվետվությունների քննարկումների շրջանակում, ինչը թույլ է տվել ամրապնդել Հայաստանի ներկայությունն ու հեղինակությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեում: Հայաստանը ընտրվեց նաև հաջորդ նստաշրջանի բյուրոյի անդամ և փոխնախագահ, որը կկայանա 2027 թվականին Ստամբուլում:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով Հայաստանի բաց թողած ժամանակը՝ մոտ 3 տասնյակ տարի այս կոնվենցայով ոչինչ չանելը, կարծում ենք, որ պետք է ավելացնել ջանքերը՝ հայտերի քանակը ավելացնելու համար: Այս համատեքստում շատ կարևոր է վարչությունում ստեղծվող նոր բաժինը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցության համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք ՄԺԾԾ ծրագրում առաջարկել ենք ավելացնել ոլորտի ֆինանսավորումը և ակնկալվող ցուցանիշները: Բացի այդ, առաջիկայում նախատեսում եմ փորձագիտական հանդիպում անցկացնել մեր մասնագետների հետ (հնագետներ, ճարտարապետներ և այլն) և փորձել իրենց ջանքերը կամավորական սկզբունքով ներգրավելով ազգային փորձագետների ներուժն օգտագործելով

Scanned with CamScanner

պատրաստել մի քանի հայտ՝ Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում գրանցելու համար:

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության պետ՝ ***Հարություն Վանյան***

04.08.2026

Scanned with CamScanner